

23.09.2017թ. կայացած նիստի արձանագրության

N ԿՄՁԳ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցմամբ գնահատող հանձնաժողովի նիստի
գ. Զրվեժ«20» «հոկտեմբերի» 2017թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան,

Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Թադևոսյան, Գ.Բադալյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պետրոսյան

Զրվեժ համայնքի ԿՄՁԳ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Մարգարյանը տեղեկացրեց, որ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» չափանիշի գնահատման նպատակով, ուսումնասիրելով Լիազոր մարմնից և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվությունը ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Զրվեժ համայնքի կողմից ԿՄՁԳ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով՝ համայնքի 20-րդ և 28-րդ փողոցների լուսավորման համակարգերի կառուցման նպատակով հայտարարված գնանշման հարցմանը 19.07.2017 թվականին մասնակցել էր «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), որը ճանաչվել էր առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Համաձայն ՀՀ ԿԱ N526-ն որոշման 43-րդ կետի 3-րդ մասով 20.07.2017թ. ֆինանսական միջոցներ չափանիշի գնահատման նպատակով հարցում է ներկայացվել ՊԵԿ, ինչպես նաև Ընկերությանը ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովին ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

ՊԵԿ-ի կողմից 24.07.2017թ. տրվել է եզրակացություն, որ ընկերության նախորդ երեք տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է 880308 դրամ, որը պակաս է գնային առաջարկից, գնային առաջարկը՝ ներառյալ ԱԱՀ-ն կազմում է 16 150 000 ՀՀ դրամ:

Գնահատող հանձնաժողովը 26.07.2017թ. հրավիրած նիստում, Ընկերության կողմից ներկայացրած փաստաթղթերում արձանագրել է անհամապատասխանություններ և առաջարկել է Ընկերությանը շտկելու անհամապատասխանությունները:

Ընկերությունը 27.07.2017թ. էլեկտրոնային եղանակով ներկայացրել էր գրություն, որ հայտնում և հավաստում է, որ Ընկերության ֆինանսական միջոցները բավարարում են հրավերի պահանջներին և հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից, սակայն ֆինանսական միջոցներ չափանիշը հիմնավորող որևէ փաստաթուղթ չի ներկայացվել:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված եզրացությունը ընկերության հայտը մերժվել էր ֆինանսական միջոցներ չափանիշի՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընկերությունը գնահատող հանձնաժողովի որոշումը 14.08.2017թ. բողոքարկել էր Գնումների բողոքարկման խորհուրդ, խորհրդին ներկայացրել էր ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացրած 2016թ. 4-րդ եռամսյակի ավելացված արժեքի հարկի ճշտված հաշվարկը: Խորհուրդը հիմք ընդունելով Ընկերության ներկայացրած՝ 2016 թվականի չորրորդ եռամսյակի ճշգրտված ԱԱՀ-ի հաշվարկը արձանագրել էր, որ Ընկերության երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 18 880 308 ՀՀ դրամ, այնուհետև կայացրել էր որոշում՝ դադարեցնելու ԿՄՁԳ-ԳՀԱՇՁԲ-17/3 գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի կողմից 27.07.2017թ. թիվ 3 արձանագրությամբ ընկերության հայտը մերժելու մասին որոշումը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ ՍՅ-ԷՍ-2017/30 որոշումը ԿՄՁԳ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հանձնաժողովը սույն թվականի սեպտեմբերի 8-ին հրավիրած նիստում դադարեցված է համարել 27.07.2017 թվականի թիվ 3 արձանագրությամբ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և գրությամբ առաջարկել է Ընկերությանը մինչև 2017 թվականի սեպտեմբերի 12-ը ֆինանսական միջոցներ չափանիշի գնահատման համար ներկայացնել ՀՀ Կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկատվություն հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի վերաբերյալ:

Ընկերության կողմից 12.09.2017թ. ներկայացվել է գրություն, որ ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթը տրամադրվել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին:

Միևնույն ժամանակ, 2017 թվականի սեպտեմբերի 11-ին գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին տեղեկացվել է, որ դադարեցվել է Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը և համաձայն

Հայաստանի հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ կարգ) 43-րդ կետի 3-րդ մասի, կրկին անգամ՝ 11.09.2017թ. էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացվել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա՝ 19.07.2017թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Սահմանված ժամկետում 13.09.2017թ. կոմիտեն էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրել է հարցման մասին եզրակացություն, ըստ որի կազմակերպության նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է 880 308 ՀՀ դրամ, որը չի համապատասխանում գնանշման հարցման հրավերի պահանջներին:

Ընկերությունը 20.09.2017 թվականին կրկին գրությամբ տեղեկացրել է համայնքի ղեկավարին իրենց կողմից ներկայացրած բոլորի բավարարման մասին, և կից տրամադրել ԱԱՀ-ի հաշվարկի՝ 13.04.2017թ. 20.07.2017թ. և 15.08.2017թ. և 15.09.2017թ. տրված տեղեկանքի սկանավորած տարբերակները:

Քանի որ համաձայն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կայացրած որոշման և կոմիտեի կողմից տրված եզրակացության կազմակերպության նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի մասին տվյալները հակասական են, գնահատող հանձնաժողովի հետագա գործառույթների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով 25.09.2017թ. համայնքապետարանը դիմել է Լիազոր մարմին և ներկայացրել ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնման ընթացակարգի հետ կապված ամբողջ տեղեկատվությունը:

Լիազոր մարմինը 19.10.2017թ. տեղեկացրել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 17.10.2017թ. թիվ 1/6-1/41972-17 գրությամբ տրամադրել է տեղեկատվություն այն մասին, որ Ընկերությունը 13.04.2017 թ. ներկայացրել է 2016 թ. շահութահարկի հաշվարկ, որի համաձայն Ընկերության 2016 թվականի համախառն եկամուտը կազմել է 880308 դրամ: Այնուհետև Ընկերության կողմից 04.10.2017 թ. ներկայացվել է 2016 թվականի շահութահարկի ճշգրտված հաշվարկ, ըստ որի Ընկերության 2016 թվականի համախառն եկամուտը կազմում է 18880308 դրամ:

Ուսումնասիրելով ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնման ընթացակարգը, ներկայացրած փաստաթղթերը, պարզաբանումները պարզվում է, որ Ընկերության ֆինանսական միջոցներ չափանիշը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ կազմում է 880308 դրամ:

Ընկերության կողմից ԱԱՀ-ի ճշտված հաշվարկը ներկայացվել է գնման հայտը ներկայացնելուց 27 օր անց, օգոստոսի 15-ին, իսկ շահութահարկի ճշտված հաշվարկը՝ 77 օր անց, հոկտեմբերի 4-ին, հետևաբար Ընկերության ներկայացրած հայտի «Ֆինանսական միջոցներ» չափանիշը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Հիմք ընդունելով վերը նշվածը հանձնաժողովը որոշեց.

1. «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած: Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարության տեքստը ուղարկել հրապարակման:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Անդամներ՝

Քարտուղար՝

Ա. Մարգարյան

Ս. Թադևոսյան

Գ. Բադալյան

Ա. Պետրոսյան